

ՀՈԴԿԱԾՆԵՐ

ՃՅՅ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՐՑՈՒ

ԷՂ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քաղաքակրթությունների մրցակցության և երկխոսության արդի դարաշրջանում ազգային ինքնիշխանության խնդրին միտված գաղափարաքաղաքական ծրագրերում ապագան իշխում է անցյալի վրա, քաղաքական բնույթի նախագծերը՝ սովորույթների: Այլ կերպ ասած՝ մրցունակ լինելու, մեր աշխարհում երկրի ու ազգի ճակատագրով մտահոգվելու քաղաքական շարժառիթները ոչ այնքան բխում են անցյալի և նրա արժեքային համակարգի նկատմամբ ունեցած հավատարմությունից, որքան քաղաքակրթության զարգացման ապագան կոահելու և այդ ապագայում սեփական տեղն ու դերը ճշգրտելու մտահոգությունից: Նույնիսկ այն դեպքերում, երբ գաղափարաքաղաքական նախագծերի հիմքում ընկած են ազգային ավանդական կեցության ընկերամշակութային արժեքների պահպանման կամ արդիականացման շարժառիթները, միևնույն է, դրանք միտված են դեպի ապագան: Բանն այն է, որ հարափոփոխ մեր աշխարհում արագորեն արժեզրկվում է կյանքի կազմակերպման նախորդ սերունդների փորձը, և ամեն մի նոր սերունդ իր ազգային կեցությունը հարկադրաբար դարձնում է խնդրահարույց և փորձում մշակել քաղաքակրթության զարգացման նոր պայմանների ու պահանջների համարժեք, բայց նաև սեփական կենսաաշխարհին բնորոշ նախագիծ:

Իրողությունն այն է, որ արագորեն փոխակերպվող և այդ իսկ պատճառով անկայուն այս աշխարհում ապագան ավելի ուժեղ է ազդում մեր քաղաքական վարքի վրա, քան անցյալն ու ներկան: Իսկ դա նշանակում է, որ արդի պայմաններում ազգային ու հասարակական կյանքի կազմակերպման ու կանոնակարգման մշակույթը ոչ միայն պետք է սերունդների ժառանգական կապի ապահովման գործառույթ կատարի, ինչը ինքնին հասկանալի է, այլև արդիականության մեջ ներառվելու, նրա կանոններով մրցակցելու և սեփական կեցության կենսունակությունը ապացուցելու գործառույթ:

Եվ իրոք: Եթե նախապես գիտենք, որ վաղը մենք ապրելու ենք առկա պայմաններից էապես տարբերվող ընկերամշակութային և քաղաքական պայմաններում, ապա քաղաքակրթության զարգացումներին միտված ազգային ու պետական ռազմավարության մշակումը դառնում է ավելի էական ու կարևոր, քան, ասենք, ամենագերագո արարողակարգերին ու ծեսերին հետևելն ու ենթարկվելը:

Այն պարզ պատճառով, որ ապագայի մարտահրավերներից այլևս որևէ ազգ պատասպարվելու տեղ չունի, նշանակում է՝ բոլոր ազգերն էլ բառացիորեն դատապարտված են լինելու ժամանակակից: Հետևաբար կյանքի կազմակերպման ու կանոնակարգման ազգային մշակույթները ևս պետք է արդիականացվեն:

Ոչ հեռու անցյալում իշխում էր ազգագրական մի կանխավարկած, ըստ որի յուրաքանչյուր ազգային համակարգ ունի կյանքի կազմակերպման, գործառնության և վերարտադրության այնպիսի ընդգրկում ու ամբողջական մշակութային

փորձ, որը մի կողմից ապահովում է տվյալ ազգի ինքնության և նույնականության շարունակականությունը, մյուս կողմից՝ նպաստում ազգամիջյան փոխըմբռնումներին ու համակեցությանը: Բայց ժամանակները փոխվել են: Ազգամիջյան քաղաքական ու մշակութային հակամարտությունների, բախումների ու մրցակցության փորձը ցույց է տալիս, որ ժամանակակից ազգերը կոտորակվում են ըստ մշակութային առանձնահատկությունների և առաջադրում իրենց անցյալի, ներկայի ու ապագայի համատեղման և գալիքի նախագծման իրարամերժ ռազմավարություններ ու մարտավարություններ: Մարդկությունը մտել է միջմշակութային մրցակցության և հակամարտությունների մի նոր դարաշրջան, ուր քաղաքական մշակույթ դառնալու հավակնություններ են դրսևորում կյանքի ընկերային, տնտեսական ու քաղաքական կազմակերպման ու կանոնակարգման այնպիսի տարբերակներ հայեցակարգեր, որոնցից յուրաքանչյուրը նաև յուրովի է մեկնաբանում մշակութային ավանդույթների մեջ ամրագրված անցյալը, առընթեր կենսադիրքորոշումների մեջ ամրագրված ներկան և հասարակական ակնկալիքների մեջ ամրագրված ապագան:

Ուշագրավ է նաև, որ ազգային կյանքի կազմակերպման տարիմաստ այդ մշակույթներում աստիճանաբար փոխվում են համակարգաստեղծ ու համակարգապահական գործոնների կարևորման երբեմնի շեշտադրումները: Մինչ համաշխարհայնացման ներկա մարտահրավերները, այսպես կոչված բազմաբևեռ աշխարհի դարաշրջանում, ազգային շարունակականությունը ապահովող համակարգաստեղծ ու համակարգապահական հիմնական գործոն էր համարվում պատմական ժառանգականությունը երաշխավորող էթնոմշակութային հիշողությունը: Այն այսօր էլ կարևոր ազգապահական գործոն է: Մշակութային կողը, նախաձևերը (արխետիպերը) և գենը ակտիվորեն ներգործում են ժամանակակից մարդու վարքի ու աշխարհընկալման վրա: Բայց երբ խոսքը վերաբերում է ազգային ու պետական կյանքի կազմակերպման քաղաքական մշակույթին, թերևս էականը ոչ այնքան պատմամշակութային ժառանգությունն է (որպես համակարգաստեղծ գործոն), որքան ապագային միտված նախագծի մշակութային բովանդակությունը:

Բանն այն է, որ պատմամշակութային ժառանգությունը, որի մեջ, ի դեպ, ավելի շատ բնագոյ կա, քան մշակույթ, հիմնականում կատարում է ազգային վարքը նախասահմանող գործառույթ: Սխալ չհասկացվելու համար ասեմ, որ ազգային ինքնության ու նույնականության շարունակականության պահպանման տեսանկյունից՝ պատմամշակութային ժառանգության դերն անգնահատելի է¹: Բայց մեր օրերում մշակույթը առաջին հերթին այլընտրանքային իրավիճակներում ընտրություն կատարելու, ազգի մտավոր ու բարոյական որակները քաղաքականապես կազմակերպելու, կյանքը կանոնակարգելու և համակեցություն ձևավորելու, պահպանելու միջոց ու մեխանիզմ է:

Ես միտումնավոր շեշտում եմ «այլընտրանքային իրավիճակներում մշակույթի քաղաքական ընտրություն կատարելու» գործառույթը, քանի որ անցել են բարի ու հին այն ժամանակները, երբ արգելանքների (տաբուների) ու սովորույթների ազգային հաստատությունները կարող էին ապահովել ներազգային հորիզոնական կապերի մշտականությունը, ազգային նույնականության շարունակականությունը և հետևաբար՝ ազգի սոցիոմշակութային անվտանգությունը:

Դրամատիկական հարաբերությունների ձևակայացումից ի վեր ներփակ բնատնտեսության սկզբունքով ձևավորված և ղեկավարվող կյանքի կազմակերպման մշակույթը և նրան բնորոշ նախաքաղաքական ազգերը վերափոխվեցին քաղաքական ազգերի, ինչի հետևանքով նրանց կյանքի կազմակերպման

¹ Տե՛ս Ю. В. Арутюнян, Л. Н. Дровожева, А. А. Сускова, Этносоциология, М., 1998, էջ 216:

մշակույթը և քաղաքականացվեց: Բանն այն է, որ մրցակցության նոր սկզբունքների վրա կառուցվող արևմտյան քաղաքակրթությունը այլևս չէր կարող հանդուրժել, որ տնտեսական, ընկերային և ազգային կյանքի կազմակերպման մշակույթը ձևավորվի ու գործառնի քաղաքական խնամատարությունից անկախ: Ներազգային կյանքի կազմակերպումը, որ մինչև այդ ընկալվում էր որպես տվյալ էթնոսին բնականից տրված «կարգ», նոր պատմության համատեքստում դառնում է քաղաքական կամք ու քաղաքական կողմնորոշում և այլևս դժվարությամբ է տեղավորվում երբեմնի բարոյական ու հոգևոր «բարդույթների» կապանքներում: Սա հենց այն շրջանն է, երբ արևմտաեվրոպական երկրներում ձևավորվող ազգ-պետությունները առաջ քաշեցին «ամեն մի պետություն պետք է ունենա իր ազգային մշակույթը» հայտնի կարգախոսը:

Հասարակական կյանքի կազմակերպման գործում «այլընտրանքային իրավիճակներում մշակույթի քաղաքական ընտրություն կատարելու» գործառույթը ընդգծվում է նաև այն պատճառով, որ հայ ժողովուրդը դասական իմաստով դեռևս քաղաքական ազգ չէ, և ներազգային կյանքի կազմակերպման նրա մշակույթը չունի քաղաքական հստակ կողմնորոշվածություն կամ, առնվազն, կենսանվազ է:

Այս առնչությամբ «հայկական շարունակականության» ճգնաժամի շուրջ քննարկումների, առաջարկվող լուծում-նախագծերի ճիշտն ու սխալը հասկանալու և, վերջապես, մեկնարկային առաջնահերթությունները որոշելու համար իրոք անհրաժեշտ է պարզել և ճշգրտել մեր ազգային ինքնության ու նույնականության կորդինատները: Այս խնդրի պարզաբանումը ունի մեթոդաբանական կարևոր նշանակություն, քանի որ «շարունակականություն» հասկացությունը ունի տարիմաստ մեկնաբանություններ: Մի դեպքում, օրինակ, շարունակականությունը ենթադրում է անցյալի պատմամշակութային ինքնության պահպանում, մեկ այլ դեպքում միտված է դեպի ապագան և ենթադրում է ազգային համակեցության արդիականացում: Առաջին դեպքում, որպես կանոն, առաջադրվում են այնպիսի նախագիծ-ծրագրեր ու գերնպատակներ, որոնք բնորոշ են նախաքաղաքական ազգերին, որոնց գործունեության համակարգերը գործառնում են «սոցիոմշակութային Հայրենիքին» բնորոշ օրինաչափություններով: Երկրորդ դեպքում առաջադրված նախագծերն ու գերնպատակները բնորոշ են քաղաքական ազգերին, որոնց գործունեության համակարգերը գործառնում են «քաղաքական Հայրենիքին» բնորոշ օրինաչափություններով:

Ազգերի ձևավորման հարցում կան մի շարք տարաբնույթ մեկնաբանություններ. առաջին՝ ազգը որպես ազգ-պետություն (անգլո-ամերիկյան), երկրորդ՝ ազգը որպես լեզվամշակութային ընդհանրություն և տնտեսական ու քաղաքական զարգացածության բարձր մակարդակ ունեցող հանրույթ (գերմանական և մարքսիստական), երրորդ՝ ազգը որպես ինքնանույնականացման և էթնոպատկանելիության բարձր գիտակցություն ունեցող հանրույթ և այլն²:

Դժվար չէ նկատել, որ վերոհիշյալ սահմանումներից առաջինը և երկրորդը վերաբերում են դրամատիկական հարաբերությունների հաստատման փուլում ձևավորված եվրոպական ազգերին, որոնք ընկերային, տնտեսական ու քաղաքական կյանքում ազատական մշակույթ ներդնելու միջոցով ստեղծեցին ազգ-պետություն (քաղաքական ազգ): Ընդ որում, պետության և ազգի միավորումը եվրոպական երկրներում ընթացել է տարբեր ճանապարհներով³: Եթե արևմտյան և

² St'u Мирослав Хрох, От национальных движений к полностью сформировавшейся нации: процесс строительства наций в Европе, в кн.: "Нации и национализм", М., 2002, էջ 122:

³ St'u Ն. Ա. Գևորգյան, Ազգ, Ազգային պետություն, Ազգային մշակույթ, Եր., 1997, էջ 41-42:

Հյուսիսային Եվրոպայում քաղաքական ազգերի (ազգ-պետությունների) ձևավորումը ընթացել է արդեն գործառնող «տարածքային պետության» շրջանակներում, ապա արևելաեվրոպական երկրներում, ինչպես նաև Գերմանիայում և Իտալիայում քաղաքական ազգերը կազմավորվել են որպես ազգային գիտակցության, լեզվի, մշակույթի և ազգային նույնականության ձևավորման արդյունք: Սակայն երկու դեպքերի համար էլ ընդհանուրն այն է, որ այդ ազգերը ձևավորվեցին շնորհիվ այն բանի, որ արևմտյան քաղաքակրթությունը կարողացավ հայտնագործել կյանքի կազմակերպման սկզբունքորեն նոր՝ ազատական մշակույթ, որին բնորոշ է տնտեսակենտրոնությունը և էթնոկենտրոնությունը:

Ընկերային կյանքի կազմակերպման ազատական մշակույթի գլխավոր նորույթն այն էր, որ հատակեցրեց տնտեսական ու քաղաքական իշխանությունների գործառույթները, դրանք տարանջատեց և յուրաքանչյուրի իրավասությունների վերահսկման համար ձևավորվեց գրեթե օրենսդիր լիազորություններ ունեցող ամենակարող մեխանիզմ՝ շուկա: Այդ ամենի հետևանքով տնտեսական հարաբերություններում աստիճանաբար ձևավորվեց մասնավոր շահի սկզբունքով գործող տնտեսական շուկան (շուկայական հարաբերություններ), իսկ քաղաքական հարաբերություններում՝ ազգային և ընկերային շահերի սկզբունքով գործող քաղաքական շուկան (իրավական հարաբերություններ):

Ինչ վերաբերում է վերոհիշյալ երրորդ սահմանմանը, ապա այն բնորոշ է մշակութային և մարդածին ընդհանրական հատկանիշների վրա դեռևս հնագույն ժամանակներում ձևավորված ազգերին, որոնցից մեկն էլ հայ ազգն է:

Հայ ժողովրդի սոցիոմշակութային և քաղաքական արդիականացումը (մոդերնիզացիան), հետևաբար նաև հայ ազգի կազմավորումը ընթացել է «ներքևից վերև»: Այսինքն՝ ոչ թե նախապես ձևավորվել է տարածքային սկզբունքով գործող ինչ-որ պետություն, որն էլ, իր հերթին, աստիճանաբար իրեն ենթարկելով այդ տարածքում ապրող հպատակներին, նրանց միջև ձևավորել է պետահրավական հարաբերություններ և ներպետական մշակութային համասեռություն՝ դրանով իսկ նպաստելով հայ ազգի կազմավորմանը: Ժիշտ հակառակը: Նախապես որոշակի տարածք (Հայկական լեռնաշխարհը) ենթարկելով էթնոմշակութային յուրացման, ստեղծելով մշակութային ինքնություն և համակեցության հորիզոնական-ազգային կապեր՝ արդեն ձևավորված հայ ազգը կազմավորել է նաև իր ազգային պետությունը: Փաստորեն եթե արևմտաեվրոպական երկրներում ազգ-պետությունները նախորդել են իրենց ազգերին, ապա հայոց սոցիոմոսն ազգն է նախորդել ազգ-պետությանը:

Ի դեպ, եթե արևմտաեվրոպական երկրներում գործել է «ամեն մի պետություն պետք է ունենա իր ազգային մշակույթը» կարգախոսը, ապա հայկական իրականությանը առավել բնորոշ է եղել «ամեն մի ազգային մշակույթ պետք է ունենա իր պետությունը» կարգախոսը: Պատկերավոր ասած՝ եթե արևմտյան ազգերը իրենց ծագման համար «պարտական» են պետությանը և կյանքի ազատական մշակույթին, ապա մեր պարագայում պետությունն է «պարտական» ազգին: Եթե հաշվի առնենք նաև այն իրողությունը, որ պատմական հանգամանքների բերումով պետականությունը չի եղել մեր կյանքի մշտական ուղեկիցը, հավանաբար հասկանալի կդառնա նաև այն ցավալի փաստը, թե ինչու հայ մարդը ոչ միայն չունի պետական քաղաքացու հետևողական մտածելակերպ, այլև Պետությունը չի դիտում որպես իր սոցիոմշակութային շարունակականության նախապայման ու երաշխավոր:

Պատահակա՞ն է արդյոք, որ հայ ժողովրդի կենսափիլիսոփայության մեջ իշխում է մի համատարած մտայնություն, թե ինքնապահանջատիրության՝ լեզվի, մշակույթի, պատմական հիշողության, դավանանքի պահպանման միջոցով կարելի է նաև օտար երկրներում կազմակերպել «հոգևոր ինքնապաշտպանություն» և հայ մնալ: Այդ կենսափիլիսոփայության բովանդակային խորքերում ազգ-պետու-

թյունը փոխարինվում է ազգ-հայրենիքով, իսկ վերջինս էլ, իր հերթին, նույնացվում է «հայ մնալու» մտայնությանը⁴: Աշխարհի ցանկացած մասում «մի կտոր Հայաստան» ստեղծելու մոլորությունը Հայրենիքն իր մեջ կրելու ինքնախաբեությանն և ինքնաարդարացման վտանգավոր ապրում է, ինչը և՛ անցյալում, և՛ այսօր ծառայում է արտագաղթի տեսական, բարոյական և հոգեբանական հիմնավորմանն ու արդարացմանը: Սա նախաքաղաքական ազգին բնորոշ կենսափիլիսոփայություն է, որն արդեն իսկ գաղափարախոսություն և քաղաքականություն դառնալու հավակնություններ է դրսևորում: Ես նկատի ունեմ այն հանգամանքը, որ հայկական շարունակականությունը քաղաքական ազգ դառնալու և քաղաքակիրթ պետություն կառուցելու մեջ տեսնելու փոխարեն ազգային-արմատական և ազատական-արմատական նախագիծ-տեսլականներ շրջանառող քաղաքական ուժերն ու տեսաբանները *մնալու* և *դառնալու* փոխարեն հերթական անգամ առաջադրում են *զնալու* և *ունենալու* վարդապետություններ՝ երկու դեպքում էլ առաջադրելով ազգային այնպիսի նախագիծ, որի իրագործման պայմանները հիմնականում արտածին են: Ու թե հանկարծ իրադարձություններն այնպես դասավորվեցին, որ արտածին պայմանները համընկնեն դեպի պատմական Հայրենիք կամ արևմտյան քաղաքակրթություն զնալու մեր երազանքներին, ապա նախաքաղաքական ազգի ներկա կարգավիճակով կունենանք մեր երազանքների անճանաչելի այլակերպումներ: Ասածս հաստատող օրինակը նախաքաղաքական ազգի բարքերով ու մշակութային հնագույն ազգ լինելու պարծանքով անկախության և պետականության արժեգրկման այս տարիների փորձն է:

Եթե հնագույն մշակութային ազգ լինելը կամ արևմտյան քաղաքակրթության պատկանելիությունը հպարտանալու տեղիք են տալիս, հպարտանանք: Իսկ եթե մրցակցային մեր աշխարհում նախաքաղաքական ազգերը արագորեն չփոխակերպվեն քաղաքական ազգի, դատապարտված են: Լավագույն դեպքում նրանք կդառնան ազգագրական ու ընկերամշակութային հումք, որից աշխարհի հզորները իրենց տեսքով ու ճաշակով կծեփեն ու հնամենության շուք կտան համաշխարհայնացման օրինաչափություններով իրենց շարունակականությունը կազմակերպող ազգերին:

Ինչո՞ւ ընդհանրական մշակույթի ու լեզվի, ճակատագրի ու խառնվածքի ընդհանրության հիմքի վրա ձևավորված, բայց նախաքաղաքական ազգի օրինաչափություններով գործող մեր ազգային ու պետական համակարգերը չեն կարող ոչ արևմտյան քաղաքակրթության մեջ ներառնվել, ոչ էլ «ամբողջական և անկախ հայրենիքի տարածքում» բարեկեցիկ կենսագործունեություն հաստատելու միջոցով ապահովել «հայկական շարունակականությունը»:

Հայտնի և անվիճելի իրողություն է, որ էթնոսը ընդամենը բնական-ազգագրական հումք է, որից պատմական զարգացման որոշակի փուլում ժողովուրդը վերաճում է պատմության ենթակայի (սուբյեկտի)՝ ազգի: Այդ տեսակետից էթնիկական ցանկացած հանրույթ առաջին հերթին մարդկային հասարակության «բնական» զարգացման արդյունք է: Այն հենվում է մարդածին հատկությունների վրա և որոշ իմաստով ինքնաբավ է: Այլ կերպ ասած, իրադարձությունների բնականոն զարգացման պարագայում էթնիկ հանրույթը քաղաքական կազմակերպումի հակվածություն չունի: Բայց էթնիկականը ոչ միայն արյունակցական-ազգակցական որակների ամբողջություն է, այլև էթնոմշակութային ընդհանրության ընկերային կազմակերպման ձև, ինչը ևս բնականոն զարգացման պարագայում էթնոսից քաղաքական կազմակերպվածություն չի պահանջում:

Ազգագրական առումով մարդկանց էթնիկ նույնականության ձևավորման հիմքում ընկած են ծագումնաբանական առասպելները, տարածքային կապվա-

⁴ Տե՛ս Էդ. Հարությունյան, Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000, էջ 166:

ծությունը, համերաշխության զգացումը և այլն: Այդ գործոճները կազմում են էթնոսի առասպելախորհրդանիշային այն համակարգը, որի շրջանակներում էլ հենց ձևավորվում է էթնիկ նույնականությունը: Դժվար չէ նկատել, որ էթնոսի առասպելախորհրդանիշային համակարգը ապաքաղաքական է:

Նախաքաղաքական ազգերին բնորոշ էթնիկ նույնականության հիմքում քաղաքական ծրագրի բացակայությունը պայմանավորված է նրանով, որ ծագումնաբանական ընդհանրություններ ունեցող, բայց պետության ազգային ձևի մեջ ինչ-ինչ պատճառներով չհամախմբված մարդիկ կյանքը կազմակերպելու և կանոնակարգելու նպատակով ստիպված ապավինում են սովորույթների, ազգակցական կապերի և համակեցության ընդհանրական մշակույթի կարգավորիչ գործառույթներին: Այդ կերպ ձևավորված նույնականությունը չունի տնտեսական, քաղաքական ու իրավական միասնության ինստիտուցիոնալ կառույց և հենց այդ պատճառով էլ հատվածական է:

Հայ ժողովրդի պարագայում, օրինակ, էթնոկեցությանը բնորոշ հատկանիշներից մեկը համայնքային կյանքի մշակույթն է: Բայց չմոռանանք, որ համայնքը կարգավորված գործունեության համար անհրաժեշտ արգելակիչ նորմերի համակարգ է, ուր առանձին անհատների գործունեությունն ու ասիրելակերպը նախապես կանոնակարգված են և ենթակա տվյալ համայնքի գործառնության օրինաչափություններին: Համայնքի առասպելախորհրդանիշային համակարգին ենթակա և նրանից ածանցյալ համատեղ կյանքի մշակույթը, որի բնորոշ հատկանիշներից մեկը ներհամայնքային անձնական-ազգակցական կախվածության հարաբերություններն են, աստիճանաբար ձևավորում է աշխարհին հակադիր «մենքի» գիտակցում՝ ստեղծելով դրան համապատասխան այնպիսի մետաֆորներ, ինչպիսիք են՝ «միասնական ընտանիք», «սրբազան երկիր», «էթնիկ բացառիկություն» և այլն: Փաստորեն այդ «մենքը» աշխարհին ընդդիմադիր նույնականություն է, որի դրսևորման ոլորտը սահմանափակված է համայնքի կենսագործունեության շրջանակներով, և այդքանով էլ ազգայնական նույնականություն է: Պատահական չէ, որ նախաքաղաքական ազգերի կյանքի մշակույթը ավելի ագրեսիվ է, ներփակ և կոլեկտիվ-իռացիոնալ: Որակներ, որոնք մրցակցային մեր աշխարհում հայկական նույնականության շարունակականությունը դարձնում են խնդրահարույց:

Նախաքաղաքական ազգի էթնիկ նույնականությունը չունի նաև իրավական հիմքեր: Դա սովորույթների հասարակություն է, ուր որոշում կայացնելու իրավունքը գտնվում է հոգևոր կամ քաղաքական առաջնորդի ձեռքում: Նման հասարակություններում, որպես կանոն, մարդը ոչ միայն տնտեսական, այլև իրավական ապահովագրություն չունի, ինչի պատճառով ներազգային փոխհարաբերությունների «տարածքը» դառնում է անկանխատեսելի: Դա՞ չէ արդյոք պատճառը, որ մասնատիպ հասարակություններում մարդը ազգային բարքերից իր ազատությունն ու անձնական կյանքի բարեկեցության իր իրավունքը մեկնաբանում է որպես անարգելք արտագաղթի իրավունք դեպի այն երկրները, ուր ինքնաիրացման դաշտը հուսալի է և ապահովագրված: Ուշագրավն այն է, որ նախաքաղաքական ազգերին բնորոշ կյանքի մշակույթից, որպես կանոն, «փախչում» է պրոմթեևսյան տիպի ընտրանին՝ իր հետ տանելով առաջանցիկ պահանջմունքների ազգային ողջ էներգիան:

Համաշխարհայնացման արդի գործընթացներում նախաքաղաքական ազգերը կյանքի կազմակերպման և համակեցության կարգը պահպանելու հարցում մնացել են «սովորույթների հասարակության» մակարդակում: Այլ պարագաներում այդ հանգամանքը կարող էր դառնալ ազգային շարունակականության հուսալի երաշխիք: Բայց միասնացող մեր աշխարհում, երբ նաև քաղաքակրթական շփումների ակտիվացման հետևանքով նվազ տնտեսական ու ընկերային հնարավորություններ ունեցող հասարակություններում սկսում է գործել «ընկերային մասնակման օրենքը», վիճակը էապես փոխվում է:

Քաղաքակրթական արդի իրողությունների մեջ ընթացքից ներառվող «սովորույթների հասարակությամբ» բնորոշ պարադոքսներից մեկն այն է, որ տնտեսական, ընկերային ու քաղաքական ազատությունները հարուցում են ինքնատիպ ողբերգություններ ու արժեքային բնույթի հակասություններ: Մասնավորապես՝ կենցաղը աստիճանաբար վերածում է թատերայնացված սոցիումի, ուր մարդիկ հնարավորություն են ստանում խաղալ իրենց մտավոր, տնտեսական ու բարոյական կարողությունները գերազանցող դեր⁵: Այդ տեսակետից հայկական շարունակականությամբ սպառնացող և ազգային համակեցությունը ներսից քայքայող գործոններից մեկը կարելի է ձևակերպել որպես ազգային և բարեկեցության երկրնտրանք:

Ազգային և բարեկեցության երկատվածությունը, բացի այլ պատճառներից, նաև հայ ժողովրդի նախաքաղաքական ազգ մնալու հանգամանքով պայմանավորված սահմանափակ քաղաքական հնարավորությունների և հայ էթնոսի կենսաբանական ու ընկերամշակութային որակների ընձեռած ստեղծագործական հավակնությունների անհամապատասխանության հետևանք է: Այդ անհամապատասխանությունը հայրենասիրական կոչերով և ազգային գերնպատակներ առաջադրելով չես վերացնի: Առավել ևս, որ գիտակցության խորհրդապաշտական և օգտապաշտական երկատվածությունը հայ ազգային ինքնության բնորոշ գծերից մեկն է: Եթե մեզ պատմական Հայրենիք կամ Արևմուտք առաջնորդող քաղաքական ուժերը առաջիկայում չկարողանան լուծել «ազգային և բարեկեցության» երկրնտրանքը, ապա հայկական շարունակականության առանց այն էլ վտանգվածությունը կստանա նոր դրսևորումներ: Դրանցից մեկը ես կանվանեի ազգային կյանքի «ժամանակային ուղղահայացի» ժառանգական հաջորդականության կորուստ:

Պարզաբանեմ միտքս: Մարդը կենդանուց գլխավորապես տարբերվում է կյանքի մասին վերացական պատկերացումներ ձևակերպելու օժտվածությամբ: Բայց առօրյա գիտակցության համար կյանքի մասին պատկերացումներն այնքան ավելի են իրատեսական ու գործունեական, որքան առարկայական են ու հասանելի: Այդ իմաստով մարդ արարածը «նախնիներին» վերադառնալու կենսաբանական հնարավորությունները դեռևս իսպառ չի կորցրել: Կենդանին իր կեցությունն ու գոյությունը ծավալում է տարածության մեջ: Նրա գոյության ազատությունը տարածական է, քանի որ օժտված է «այս տեղը» «այն տեղից» տարբերելու ընդունակությամբ⁶: Մինչդեռ մարդը էթնոմշակութային և ընկերամշակութային էակ է գլխավորապես այն պատճառով, որ, բացի տարածական կողմնորոշումներից, օժտված է նաև «այս ժամանակը» «այն ժամանակից», այժմը անցյալից տարբերելու ընդունակությամբ: Նույնիսկ այն դեպքերում, երբ մարդը իր գոյության իրավունքը փաստում է զուտ տարածական չափումներով, կենդանուն բնորոշ «այստեղի» ու «այնտեղի» տարածական ըմբռումներին նոր իմաստ է հաղորդում, քանի որ նրա համար դրանք ոչ թե պարզապես աշխարհագրական չափումներ են, այլ էթնոմշակութային (Հայրենիք) ու ընկերամշակութային (Պետություն):

Կենդանին անպայման ապրում է այժմ: Մարդը ժամանակի մեջ տեղափոխվող էակ է: Նա կարող է դուրս գալ «այժմից» և վերադառնալ «անցյալ»: Անցյալի հիշողությունը, ներկայի իմաստավորումը և ապագայի ուրվագծումը հնարավոր են դառնում միայն այն պատճառով, որ մարդը օժտված է անցյալը հետոյից, մինչև հաջորդից, անցողիկը հավերժից տարբերելու ունակությամբ:

Պատմության գրեթե բոլոր դարաշրջաններում հայ ժողովրդի հերոսական պայքարի կամ համբերատար տառապանքների ներքին շարժատիթը եղել է առաջընթաց մի դիրքորոշում՝ անցյալը հիշել, ներկան հաղթահարել և գնալ ապագային

⁵ Տե՛ս Ս. Сорокин, Об основных условиях возможности возрождения нашего хозяйства, - «Социологические исследования», 1999, № 2, էջ 4-6:

⁶ Տե՛ս И. Ефимов, Практическая метафизика, М., 2001, էջ 229-230:

ընդատաջ: Այլ կերպ ասած՝ հայկական շարունակականության կենսափոխարկության հիմքում թեև ընկած է անցյալի, ներկայի և ապագայի օրգանական միասնությունը, բայց գերիշխողը անցյալի հիշողությունն է և ներկայի հաղթահարումը: Ընդ որում, հայկական անցյալը ժողովրդի հիշողության մեջ ամրագրվել է ընտրողաբար. պահպանվել և հիշվում են գլխավորապես պատմության մղձավանջային դրվագները: Այստեղից էլ՝ գնալու, «ավետյաց երկիրը» մեկ այլ տեղ փնտրելու կենսակերպը և կենսափոխարկությունը:

Թվում էր, թե ինքնիշխանության հաստատումից հետո իրավիճակը կփոխվի: Բայց հենց այն պատճառով, որ հայոց ազգային համակարգը հետխորհրդային այս տարիներին, որպես կանոն, ծանրաբեռնվեց առընթեր էլքեր չունեցող նախագծերով ու պատմական հատուցում պահանջող քաղաքական անհետաձգելի պահանջումներով, որոնք նաև հայ քաղաքացուց պահանջում են ժամանակավորապես հրաժարվել «այսօր բարեկեցիկ ապրելու» ցանկություններից, այդ պատճառով էլ հայոց հասարակությունը ազգային կյանքի «ժամանակային ուղղահայացի» փոխարեն նախընտրում է ապավինել կյանքի կազմակերպման «տարածական ուղղահայացին»: Ըստ այդ նախընտրանքի՝ եթե «ազգային երկիրը» բնականոն կենսագործունեության համար չունի և չի ստեղծում անհրաժեշտ պայմաններ, իսկ ժամանակային ուղղահայացը ներկան հիմնովին ենթարկում է անցյալից մնացած ազգային չլուծված գերխնդրին, մնում է այլուրներում փնտրել բնականոն կենսագործունեության ընկերային, տնտեսական ու քաղաքական պայմաններ: Հանգամանք, որ հետխորհրդային հայ հասարակության համար վերանել է հայկական շարունակականության ժամանակային ուղղահայացի անլուծելի խնդիրներից փախուստի ձևի:

Անշուշտ, այս իրողությունից ամենևին էլ չի հետևում, թե հայ քաղաքացին իր սոցիալական ճակատագիրը նախընտրում է ազգային ճակատագրից: Ծակատագրերի այդ երկչափությունից ընդամենը բխում է, որ ազգային զգացմունքներից, խորհրդանիշներից ու պատմական անցյալից ածանցյալ տեսլականները կարող են և՛ համընկնել, և՛ չհամընկնել՝ «ընկերային ու տնտեսական անհատի» ուսցիոնալ գնահատականներին: Եթե նկատի ունենանք, որ ազգայինը գլխավորապես ժամանակային շարունակականություն է, իսկ ընկերայինը՝ տարածական, ապա կարող ենք փաստել, որ ազգայինի և ընկերայինի անհամամասնական զարգացման, որպես կանոն, ընկերային կյանքը ազգային կյանքին ստորադասելու քաղաքականության հետևանքով հայկական շարունակականությանը վտանգող գործոն կարող են դառնալ անգամ հայկական պահանջատիրության անհարկի շահարկումները:

Սրբազան զգացմունքները չեն ձևայնացվում և չեն դառնում նախագիծ-ծրագրեր: Դրանք նաև չեն թմբկահարվում: Առավել ևս, որ հայկական շարունակականության խնդիրը ոչ թե պատմական Հայրենիքի տարածքային ամբողջականության վերականգնման տեսլականի մեջ է, որը փայլփլում ու մարմնում է ցանկացած հայի հոգու անհիմանալի խորքերում, այլ այդ տեսլականի առարկայացմանն ուղղված այս պահի իրատեսական քաղաքական գործողությունների: Մի՞թե պարզ չէ, որ ժամանակային շարունակականության խզման գլխավոր պատճառներից մեկը ինքնաբավության ձգտող հայ անհատների և նրանց գործունեության համար անհրաժեշտ պայմանների բացակայությունն է: Տնտեսական իմաստով հարցը պարզ է: Համապատասխան պայմանների ձևավորման դեպքում հնարավոր է նաև, որ հայրենիքից հեռացածների մի մասը վերադառնա: Բայց հայկական շարունակականության տեսակետից երևույթն արդեն իսկ վտանգել է ազգապահպան մի շարք բախտորոշ գործոնների գոյությունն ու գործառնությունը: Բանն այն է, որ ազգային համակարգը կարող է գործառնել այնքան ժամանակ, քանի դեռ առանձին անհատները ինքնական հավատազրկում են ազգային նույնականությանը և ունեն այդ նույնականությունը կորցնելու վախ:

Ազգային և բարեկեցության ներկա երկընտրանքի պարագայում ազգաստեղծ ու ազգապահպան վերոհիշյալ գործոնները լիարժեք չեն աշխատում: Ազգայինը դիտելով որպես ժամանակային հաջորդականության դրսևորում, իսկ բարեկեցությունը՝ տարածական՝ հայ հասարակության մի ստվար հատվածը իր ինքնաբավության դրսևորման սոցիոմշակութային հիմունքների՝ ազատության, հույսի և ձեռքբերման գործոնների էներգիան իրացնելու հնարավորությունը զրլ-խավորապես տեսնում է կյանքի կազմակերպման տարածական չափումների փոփոխության մեջ: Մեր գոյության իրավունքը դարձել է տարածական: Գնա և կուճենաս: Եթե ցեղասպանության տարիներին տարածական չափումների փոփոխությունը հայության մի զգալի հատվածի համար այլընտրանք չունեցող հարկադրանք էր, ապա կյանքի կազմակերպման տարածական կորորդիմատների ներկա փոփոխության պատճառն այն է, որ հայոց սոցիոմի տնտեսական, ընկերային, քաղաքական ու բարոյաֆոգեբանական տարածությունները չունեն ազգային ու ընկերային կապվածությանը նպաստող անհրաժեշտ գրավչություն:

Այդ գրավչությունը բացակայում է նաև «հայկական շարունակականության» քաղաքական նախագծերում: Դրանք այնքան ընդհանրական ճշմարտություններ պարունակող նախագծեր են, որ ընդունելի են բոլորի կողմից: Եվ իրոք, ո՞վ կմերժի այն ծրագիր-նախագիծը, որի տեսլականը ինքնաբավ, ազատ ու բարեկեցիկ կյանքով ապրող անհատների հասարակության ստեղծումն է: Հայ հասարակության մեջ չես գտնի մեկին, որ մերժի բարեկեցիկ կենսագործունեության համար անհրաժեշտ նախապայմանի՝ ամբողջական ու անկախ հայրենիք ստեղծելու գերնպատակը: Բայց ուշագրավն այն է, որ այդ գերնպատակ-նախագծերում հասարակությունը չի դիտվում որպես գործողությունների քաղաքական սուբյեկտ: Իսկ դա վկայում է, որ հայոց քաղաքական ընտրանին փորձում է «հայկական շարունակականության» քաղաքականությունը կառուցել «վերևից ներքև»՝ մեկ անգամ ևս հաստատելով այն իրողությունը, որ մեզանում գաղափարական նախագծերը նախորդում են ազգի կամքին, ազգային համակեցության փորձին ու առընթեր հոգսին:

Ազգային ու պետական կյանքի սոցիալ-տնտեսական կազմակերպման խնդիրը լուծելու փոխարեն «արտակարգ լիազորություններով» գործելու և նախագծերի ներդրման-պարտադրման քաղաքականությամբ զբաղվելու շարժանիքներից մեկն այն է, որ հայ քաղաքական ընտրանին չի վստահում հասարակության կողմնորոշումներին ու ընտրություն կատարելու կարողությանը: Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ քաղաքական ընտրանու համար շատ ավելի դյուրին է ժողովրդի հետ խոսել վերացական, հեռու-հեռավոր ապագային առնչվող և, հետևաբար, չպարտավորեցնող ազգային-սրբազան խնդիրների մասին: Ինչ խոսք, Հայրենիքի և Պետության համատեղման լրջագույն խնդիր ունեցող հայ ժողովրդի պարագայում ցանկացած քաղաքական նախագիծ չի կարող լիովին ձեռքբազատվել հուզական նրբերանգներից: Բայց պատճառը միայն դա չէ:

Համակարգային փոխակերպումների այս տարիների փորձը ցույց է տալիս, որ բազմաթիվ առարկայական ու ենթակայական պատճառներով ազատականության ու ժողովրդավարության արժեքները նախաքաղաքական ազգային համակարգերում ենթարկվում են այլակերպումների, ինչը սեփական սխալները կոծկելու և ընկերային դժգոհությունները մեղմելու նպատակով քաղաքական ընտրանին հաջողությամբ շահարկում է: Նման շահարկման տարածված ձևերից մեկն էլ սոցիոմշակութային ազգայնականությունն է: Թյուր մեկնաբանությունները բացառելու համար հարկ է նկատել, որ արդի համաշխարհայնացման ու համահարթման վտանգները կանխելու ճանապարհին առողջ ազգայնականությունը ազգային ու պետական կյանքի ներքին կազմակերպվածության, արտաքին ու ներքին վտանգները զգալու և կանխելու համակարգային ընկալունակության, ինչպես նաև հասարակության բարոյաֆոգեբանական հուսալիության կարևոր

նախապայմաններից մեկն է: Բայց մեր օրերում ազգայնականությունը կարող է դառնալ կենսակերպ ու կենսափիլիսոփայություն, եթե «ազգային տրվածությունը» լրացվում է «քաղաքացիական տրվածությամբ»: Հակառակ դեպքում ազգային ու քաղաքացիական նույնականությունների միջև կարող են ծագել հակասություններ, ինչը լարված հարաբերություններ է ստեղծում նաև հասարակության ազգայնական ու ժողովրդավարական ինքնագիտակցությունների միջև:

«Հայկական շարունակականության» հիմնախնդրի տեսանկյունից ազգային և քաղաքացիական տարրմբռնումները, ինչպես նաև «ազգի իրավունքի» և «քաղաքացու իրավունքի» անհիմն ու անհարկի հակադրումները մեկ անգամ ևս հաստատում են, որ մեզանում դեռևս չի լուծվել պետության և հասարակության, ազգային ու քաղաքացիական շահերի միջև ներդաշնակության հաստատման հիմնախնդիրը: Բանն այն է, որ ազգային և քաղաքացիական նույնականությունները ձևավորվում են տարբեր հիմքերի վրա և ենթարկվում շարունակականության տարբեր տրամաբանությունների: Ազգային նույնականության պարագայում պետության նկատմամբ մարդու պարտականություններն ու կապվածությունը բարոյական է և խարսխված է ազգային հայրենասիրության զգացմունքի վրա, մինչդեռ քաղաքացիական նույնականության պարագայում պարտավորություններն ու կապվածությունը իրավական են և խարսխված օրենքի հեղինակության վրա⁷: Այն իրողությունը, որ հայոց հասարակությունը այս տարիներին ներքնապես պառակտվել է և ակնհայտ օտարվածություն կա անպաշտպան-անապահով մեծամասնության ու ընկերային-քաղաքական ընտրանու միջև, նշանակում է՝ իրոք մարդկանց ազգային ու քաղաքացիական պատկանելիությունների միջև ձևավորվել է վտանգավոր անջրպետ և գործառնական տարբերություն: Այդ տարբերությունը այսօր արդեն «հայկական շարունակականությունը» դարձրել է վթարային, քանի որ Ազգային ու Պետական հայրենասիրությունների դրսևորման համար ստեղծվել են անհավասար պայմաններ: Կասկած չկա, որ «հերթական» սահմանային իրավիճակում հայ ժողովուրդը իր նույնքան հերթական «Ավարայրով» ու «Սարդարապատով», բարոյական ու ռազմական հաղթանակներով վերստին կփաստի Ազգային հայրենասիրության իր բարոյական անսպառությունը: Տառապած ու հայածված ազգի արժանապատվության, համբերության և հատուցման ակնկալման իռացիոնալ ցանկությունները միշտ էլ հակված են իրենց տառապանքները իմաստավորելու և գոյատևման մաքառումներին ոգեղեն բովանդակություն հաղորդելու համար ստեղծել հատուցման և հատուկ առաքելության հայրենասիրական կենսափիլիսոփայություն: Բայց դա քաղաքականապես չկազմակերպված, պետական-դիվանագիտական հնարավորությունից զուրկ, մի խոսքով՝ նախաքաղաքական ազգերին բնորոշ կենսափիլիսոփայություն է: Եթե պետականության բացակայության պայմաններում այն այլընտրանք չուներ, և վտանգ չկար, որ պետության ընկերային ու տնտեսական սխալ քաղաքականության հետևանքով մարդու քաղաքացիական իրավունքներն ու քաղաքացիական հայրենասիրությունը կարող են խարխլել ազգային հայրենասիրության հիմքերը, ապա պետականության պարագայում, երբ նաև քաղաքական նախագծերում մարդկանց ընկերային շահերը չունեն կոտորակված բովանդակություն, Սահմանադրական հայրենասիրությունը կարող է զրկվել առարկայական հիմքերից: Բանն այն է, որ միայն ազգային հայրենասիրության սնափառ քարոզչությամբ, առանց արդարության, օրինականության, իրավահավասարության և, վերջապես, ազգային և բարեկեցության միասնականացման, Սահմանադրական հայրենասիրություն չի լինում:

⁷ Տե՛ս Ж. Т. Тощенко, Этнократия: История и современность. Социологические очерки, М., 2003, էջ 410-412:

Կյանքի նվազագույն-անհրաժեշտ պահանջումներն ընդհանուր առմամբ դիկտատորայի կապանքներում հայտնված մարդկանց մեծ մասի մեջ վաղ թե ուշ ձևավորվում է երկրի գործերին «չմասնակցելու էթիկա» և «չմասնակցելու քաղաքականություն»: Այն մեզանում արդեն իրողություն է, և «հայկական շարունակականությունը» վթարային իրավիճակից դուրս բերելու ելքը Պետության ներազգայնացումն է:

Քաղաքականության զարգացման արդի գործընթացների համատեքստում «հայկական շարունակականության» խնդիրը «մնալու» և «ներքին պահանջատիրության» հատուկ հայեցակարգի մշակումն ու իրագործումն է: Եթե պահանջատիրության արտաքին դրսևորումը ուղղված է պատմական հայրենիքի վերականգնմանը, ապա ներքին ուղղվածությունը հանգում է այն խնդիրներին, որոնք նպաստում են ազգի քաղաքական կազմակերպման ամրապնդմանը և նրան դարձնում իրական պահանջատեր: Պահանջատիրության արտաքին ուղղվածությունը կարելի է անվանել բացարձակ պահանջատիրություն, իսկ ներքին ուղղվածությունը՝ հարաբերական պահանջատիրություն: Ընդ որում, բացարձակ պահանջատիրությունը պետք է ընկած լինի ազգային գաղափարախոսության հիմքում, իսկ հարաբերական պահանջատիրությունը՝ պետական քաղաքականության: Նկատենք միայն, որ պահանջատիրության բացարձակ ու հարաբերական դրսևորումները ոչ միայն իրար չեն հակասում, այլև փոխարարձաբար պայմանավորված են: Պատմական հայրենիքի պահանջատիրությունը այս փուլում ենթադրում է ազգային ուժեղ պետականության առկայություն, որն իր հերթին պատմական հայրենիքի պահանջատիրությունը քաղաքականապես լուծելու միջոց է: Սա նաև Հայրենիքի ու Պետության «երկրնտրանքի» լուծման ուղին է:

Հայրենիքի ու Պետության «երկրնտրանքի» լուծման և քաղաքական ազգի ու քաղաքական նույնականության ձևավորման համար անհրաժեշտ են մի շարք պայմաններ. առաջին՝ հոգևոր, քաղաքական և տնտեսական իշխանությունների իրավասությունների ճշգրտում և տարանջատում, երկրորդ՝ մասնավոր շահերի սկզբունքով գործող տնտեսական շուկայի ձևավորում, երրորդ՝ ազգային և հասարակական շահերի սկզբունքով գործող քաղաքական շուկայի ձևավորում, չորրորդ՝ շահերի համաձայնեցման ու հավասարակշռման միջոցով սոցիալ-տնտեսական տարբեր շահեր ունեցող խավերի ինտեգրում, հինգերորդ՝ պետության և հասարակության գործընկերության հաստատում և այլն: Հասարակության սոցիալ-քաղաքական այդ ինտեգրացիայի հետևանքով ազգի բոլոր անդամները ձեռք են բերում հավասար իրավունքներ և դառնում պետության քաղաքացիներ: Այդ, այսպես կոչված, սահմանադրական պետությունը ազգային կյանքի քաղաքական կազմակերպման այնպիսի կարգ է, որը ստեղծվում է ժողովրդի ցանկությանը ու կամքով: Բայց մյուս պետության ստեղծման համար անհրաժեշտ է, որ ազգը դառնա նաև քաղաքացիական ինքնագիտակցության կրող: Նման քաղաքական մոբիլիզացիայի համար անհրաժեշտ են շատ ավելի ուժեղ և համախմբող գաղափարներ, քան, ասենք, ինչ-որ տեղ գնալու և ինչ-որ մեկին նմանակելու վերացական գաղափարը: Այդպիսին կարող է լինել նույն պետությանը պատկանելու գաղափարը (պետական նույնականություն):

Յ. Ա. АРУТЮНЯН - Армянская продолжительность: проблема надежности функционирования. - Армянская национальная и государственная системы до сих пор не определили и не уточнили меру и степень адаптации к логике развития современной цивилизации и, следовательно, стоят перед проблемой укрепления внутренней надежности и политической определенности. Исходя из этого, на основе закона структурной детерминации поведения трансформирующей системы, в статье анализируются причины кризисной ситуации продолжительности армянского социума.